



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ**

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

15.03.2019թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:

Բացակայում են Ն.Վարդանյանը, Տ.Եփրեմյանը, Մ.Գասպարյանը և Ա.Փանոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Չաքարյանը, Ս.Շահնազարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
2. Համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով ստեղծելու և նրա կազմը հաստատելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 81 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 80 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
5. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
6. Չարենցավան համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի կատարման մասին հաղորդում:
Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չչափանոց) հատվածից գումար հատկացնելու մասին:
8. Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2018 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման և 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
9. Փողոցի անվանակոչելու համար համաձայնություն տալու մասին:
10. Չարենցավան համայնքի Կարենիս գյուղի գլխավոր հատակագծի նախագիծը հաստատելու մասին;

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -11

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Luteghin.

1. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Ձեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հոդային օրենսգրքի 46-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, **առաջարկում եմ** թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10

դեմ - 0

ձեռնպահ -1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Luteghin.

2. **Համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջերային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով սրբեղծելու և նրա կազմը հաստատելու մասին:**

/Ձեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 62-Ն որոշման 23-րդ կետը, **առաջարկում եմ**. ստեղծել համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորիկ

Պողոսյան Մնացական

Խլղաթյան Արսեն

Գասպարյան Անարոյի

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Lutghն.

3. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 81 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Չեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով դրույթներով **,առաջարկում եմ.**

1. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «**Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին**» N 81 որոշման NN 1-9 և 12, 13 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2. Սահմանել, որ սույն որոշման 1 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 4-ից-9-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

3. Սահմանել, որ սույն որոշման 2 հավելվածի՝

1) 2-ից-4-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 5-ից-14-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

4. Սահմանել, որ սույն որոշման 3 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 4-ից-11-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

5. Սահմանել, որ սույն որոշման 4 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 4-ից-9-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

6. Սահմանել, որ սույն որոշման 5 հավելվածի՝

1) 2-ից-4-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 5-ից-14-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

7. Սահմանել, որ սույն որոշման 6 հավելվածի՝

1) 2-րդ տողում նշված պաշտոնային դրույքաչափը ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 5-րդ տողում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

8. Սահմանել, որ սույն որոշման 7 հավելվածի՝

1) 2-րդ և 3-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

2) 6-րդ և 8-րդ տողերում նշված պաշտոնային դրույքաչափերը ուժի մեջ են մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից: